ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2016թ. թիվ 295-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 22-ի թիվ 46-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման» կարգի 5-րդ կետի և ՀՀ Լոռու մարզպետի կողմից 08.12.2015թ. թիվ 375-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2016 թվակա-նի հիմնական միջոցառումների պլանի 13.2.1 կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2016 թվականի հոկտեմբերի 20-ին Լոռու մարզում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Սուր վարակիչ հիվանդությունների օջախի վերացման կազմակերպում» թեմայով:

2. Ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով հաստատել՝

1) ուսումնավարժության ղեկավար կազմը՝ համաձայն հավելված 1-ի.

2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված 2-ի.

3) միջնորդական խմբի կազմը՝ համաձայն հավելված 3-ի.

4) ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն հավելված 4-ի:

3. ՈՒսումնավարժությունում ընդգրկել Լոռու մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովին, Լոռու մարզային փրկարարական վարչությանը, ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Լոռի»

մասնաճյուղին, Վանաձոր, Շահումյան, Գուգարք համայնքների ղեկավար կազմին, «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ին, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին, Վանաձորի թիվ 1, թիվ 3 և թիվ 5 պոլիկլինիկաներին, «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ին և մարզի լրատվական մարմիններին:

4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ.Անտոնյանին՝

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև ս/թ սեպտեմբերի 23-ը ներկայացնել իմ հաստատմանը.

2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատ-րաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

3) կազմակերպել համապատասխան փոխգործողությունների պլանների ճշգրտումը.

4) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2016թ. հոկտեմբերի 14-ին.

5) ուսումնավարժության անցկացումից հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:

5. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան փոխգործողությունների պլանները.

2) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

6. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. սեպտեմբերի 19
ք.Վանաձոր